պում և իրականացնում է հիմնարար գիտությունների ուղղությամբ տարվող հետազոտությունները, իրականացնում է հրատարակչական գործունեություն, պատրաստում է երիտասարդ բարձրորակ գիտական կադրեր, մասնակցում է հանրապետության ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացման կանխատեսումների և երկարաժամկետ ծրագրերի մշակմանը, գիտական ուղղակի կապեր է հաստատում ու համագործակցություն է իրականացնում արտասահմանյան երկրների ակադեմիաների և գիտական այլ կենտրոնների հետ ու անց է կացնում համազգային և միջազգային գիտաժողովներ, կատարում է իր կողմից սահմանված գիտական մրցանակաբաշխությունների և գիտական նվաճումների համար պարգևների շնորհում, հաստատում է գիտական կոչումներ և աստիճաններ շնորհող մասնագիտացված գիտական խորհուրդների կազմը։

3. Պահպանվում է ՀԳԱ իսկական անդամների և թղթակից անդամների երկաստիճան համակարգը։

4. Գիտության մասնագիտացված բնագավառների աշխատանքները իրականացնում են բաժանմունքները՝ նրանց կազմում ստեղծված պրոբլեմային գիտական խորհուրդների միջոցով, որոնցում ընդգրկված են հանրապետության տվյալ բնագավառի առաջատար գիտնականները։

5. ՀԳԱ համակարգում թողնվում են հիմնարար գիտություններով, այդ թվում հայագիտությամբ զբաղվող ինստիտուտները, հրատարակչությունը (իր տպարաններով), դրադարանը և ստեղծագործական տները, որոնց զբաղեցրած շենքերը, գիտական սարքավորումները և մնացած անշարժ ցույքը, հողային տարածքները, բնակելի մասերը անհատույց թողնվում են ակադեմիայի տնօրինությանը՝ առանց դրանք օտարելու իրավունքի։

6. ՀԳԱ-ն հաշվետու է հանրապետության կառավարությանը։ Պետական բյուջեից ֆինանսավորված հետազոտությունների արդյունքները առանց ըստացուցիչ փոխհատուցման տրամադրում է կառավարությանը՝ պահպանելով հեղինակային իրավունքը։

7. Ընդլայնվում են գիտահետազոտական ինստիտուտների ինքնուրույնության շրջանակները՝ նրանց ինքնակառավարման կառուցվածքները բարելավելու միջոցով։ Ինստիտուտների կարգավիճակը սահմանվում է նրանց կողմից մշակված և ՀԳԱ ընդհանուր ժողովի կողմից հավանության արժանացած կանոնակարգով։

8. ՀԳԱ ինստիտուտները սահմանված կարգով մասնակցում են պետական պատվերային թեմաների, պետական նպատակային գիտատեխնիկական ծրագրերի կատարմանը, ինչպես նաև ոչ պետական կազմակերպությունների և արտասահմանյան երկրների գիտական կենտրոնների ու առանձին ֆիրմաների հետ կնքված պայմանագրային պատվերների կատարման համար ստացված ֆինանսական միջոցների տնօրինմանը։

9. Ուժեղացնել ՀԳԱ համագործակցությունը հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ։

Ժողովի որոշումների վերջնական խմբագրությունը հանձնարարվեց ակադեմիայի նախագահությանը։

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԸ

Պատվավոր դիպլոմների հանձնում

1992 թ. հուլիսի 20-ին տեղի ունեցավ ՀԳԱ նախագահության ընդլայնված նիստը, որում Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին հանձնվեց ՀԳԱ պատվավոր անդամի, իսկ արևելագետ-հայագետ Ռոբեր Գյուլբենկյանին՝ ՀԳԱ արտասահմանյան անդամի դիպլոմ։ Նիստին ներկա էին ՀԳԱ նախագահության անդամներ, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն

Առաջինը, արևելագետ Ռոբեր Գյուլբենկյանը, ՀԳԱ ակադեմիկոսներ, թղթակից անդամներ, ՀԳԱ ինստիտուտների տնօրեններ, գիտական աշխատողներ։ Բացելով նիստը ՀԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը ասաց.

«Ակադեմիայի նախագահության հարգելի անդամներ, ակադեմիկոսներ, հյուրեր, Մեծարգո Վեհափառ Վազգեն Առաջին

Նախ և առաջ, ցանկագին գործընկերներ, ես ուզում եմ ողջունել Վեհափառ Վազգեն Առաջինի ներկայությունը Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության այս նիստին։ Ձեզ բոլորիդ հայտնի է, որ գնահատելով Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մեծ ավանդը հայ մշակույթի մեջ, նրա արժեքավոր աշխատությունները, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ընտրեց նրան ակադեմիայի կազմի մեջ որպես պատվավոր անդամ, պատվավոր ակադեմիկոսի։

Այսօր, ակադեմիայի նախագահության հանձնարարությամբ ես պատիվ ունեմ կատարել կարևոր պարտականություն՝ հանձնել Վեհափառ տիրոջը ակադեմիայի պատվավոր անդամության վկայականը։

Թույլ տվեք ցանկանալ Վազգեն Առաջինին կյանքի երկար տարիներ, հաստատ և ամուր առողջություն, բազմազան ու պտղաբեր արդյունքներ նրա գործունեության բոլոր բնագավառներում»։

Ակադեմիայի պրեզիդենտն այնուհետև ջերմորեն ողջունեց Պորտուգալիայի ակադեմիայի ակադեմիկոս, նշանավոր արևելագետ-հայագետ Ռոբեր Գյուլբենկյանին, նշեց նրա գիտական ծառայությունը հատկապես հայագիտության բնագավառում։

ՀԳԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը ընթերցեց ԳԱ ընդհանուր ժողովի համապատասխան որոշումը, որից հետո ՀԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը դիպլոմները հանձնեց Վազգեն Առաջինին և Ռոբեր Գյուլբենկյանին։

Շնորհավորական ելույթներով հանդես եկան ակադեմիկոսներ և թղթակից անդամներ Մ. Ներսիսյանը, Վ. Նալբանդյանը, Լ. Հախվերդյանը, Գ. Ղարիբջանյանը, Գ. Բրուտյանը։

Վերջում շնորհակալական խոսքով հանդես եկավ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը։ Նա մասնավորապես ասաց.

Մեծահարգ տյար Պրեզիդենտ, հարգարժան տյարք ակադեմիկոսներ, որ հավաքվել եք այսօր այստեղ, այս կամարների ներքո, հանդիսավոր առիթով հանձնելու ինձ Հայաստանի գիտությունների ակադեմիայի Պատվավոր անդամի կոչումը։ Խորագույն շնորհակալություն եմ հայտնում։ Պետք է իմ խոր համոզումով ընդգծեմ, թե ես չափազանց բարձր եմ գնահատում ակադեմիան ընդհանրապես, իբրև գիտական հաստատություն, և որ աշխարհի բոլոր առաջադեմ ազգերը, երկրները ունեն այդպիսի հիմնարկություններ և դա բնորոշում է տվյալ ժողովրդի գիտական, իմացական և մշակութային մակարդակի աստիճանը։ Ես երջանիկ եմ իբրև հայ ժողովրդի զավակ, որ նաև մեր ազգը ունեցավ և ունի այդ հաստատությունը գիտությունների ակադեմիա անունով։ Ակադեմիաները բոլոր քաղաքակիրթ ազգերին պատիվ բերող հաստատություններ են։ Երևի եթե մենք իբրև ազգություն այնքան դժբախտ հակատագիր ունեցած չլինեինք XV, XVI, XVII դարերին, հավանաբար մեր ժողովուրդն էլ պիտի լիներ այն երկրների շարքին, որ ակադեմիա ստեղծած պիտի լիներ տակավին XVII կամ գոնե XVIII դարին։ Մի ժողովուրդ, որ շատ ավելի հետ ժամանակներին ավել է Անանիա Շիրակացի, Մխիթար Հերացի և ուրիշներ, չէր կարող, իմ կարծիքով, անտարբեր մնալ և չունենալ իր ակադեմիան տակավին այդ ժամանակներում։ Բայց մեր ողբալի հակատագիրը այնպես է եղել, ինչպես դիտեք, օտար բռնակալ պետությունների լծի տակ, որ հազիվ կարողացել է շունչ քաշել։ Եվ ահա մեր ժամանակներում է, որ հայ ժողովուրդը հասավ այդ հնարավորությունը ունենալու և ստեղծելու իր ակադեմիան։

Այնուհետև շնորհակալական խոսքով ու գիտական զեկուցումով հանդես եկավ հայագետ Ռոբեր Դյուլբենկյանը ֆրանսերեն լեզվով, որը հայերեն թարգմանեց Դյուլբենկյան ֆոնդի պատասխանատու աշխատող Զավեն Եկավյանը։ Դիմելով ներկաներին անվանի հայագետն ասաց.

Հարգամեծար տար պրոֆեսոր Վիկտոր Համբարձումյան, Հայաստանի Հանրապետության գիտություններեր ակադեմիայի նախագահ, ազնվափայլ տիկիններ, հարգելի պարոններ և Լյոնի հայրենակիցներ։ Նախ և առաջ Ձեր հերողամտությանն եմ դիմում չկարողանալով արտահայտվել իմ նախնիների լեզվով։ Մի խոշընդոտ է, որ միշտ ինձ հեղել է, պարագաների բերումով՝ Ալժիրում ծնված ոչ հայուհի մորմե. հայրս մահացել է երբ հազիվ 15 տարեկանս չէի բոլորած։

Որոշ հուզումով է, որ այսօր գտնվում եմ Ձեր մեջ ստանալու համար ակադեմիկոսի կոչումն, որն ինձ շնորհել է Ձեր բարձր գիտական կաճառը, առ ի գնահատանք մեր կատարած XV, XVI և XVII դարերին հայ-պորտուգալական հարաբերությունների ի մասնավորի, և հայ առևտրի ընդհանուր պատմության նվիրված հետազոտությունների բերած համեստ մասնակցությամբ։

Պորտուգալյան հողի վրա, հետզհետե ծանոթացանք, որ ժամանակների ընթացքին, այդ աշխարհամասում չէր դադարած կապեր մշակելու զանազան ասպարեզների ոլորտում, լինի դա առևտրական, կրոնական և կամ քաղաքական կապերով Հայաստանի կամ հայերի հետ։ Այդ բոլոր հանգամանքները մեզ անձնապես մղեցին, անա երեք տասնյակներից ի վեր, կատարելու մի շարք հետազոտություններ և վերլուծություններ, որոնք ապացուցում են գոյություն ունեցած կապեր Հայաստանի ու Իբերիական թերակղզու և ի մասնավորի՝ Պորտուգալի հետ։ Եթե պորտուգալցիները եղել են մեծ ծովագնացներ, դեռ XV դարի վերջից հանապարհորդել են ծովերով մեկ, մինչև Հնդկաստան, Չինաստան, Բրազիլ, ապա հայեր իրենց կարգին ամեն ժամանակ եղել են նաև մեծ հանապարհորդներ աշխարհով մեկ։ Հայերն ու պորտուգալցիք, քրիստոնեական նույն ակոսի մեջ բրծված, չէին կարող իրար չհանդիպել Հնդկաստանի հանապարհին։ Պատմությունը արձանագրելը նախ նշանակում էր ձեռք բերել վավերական · գրավոր տեղեկություններ, հետո մեկնաբանել տվյալ տեղեկությունը և վերլուծել՝ նշմարտություն հայքայքելու մտահոգությամբ։ Պատմաբանը, ինչպես ասում էին հին աշխարհի գիտնականները, մի տեսակ վկա էր՝ ունակությունն ունենալով տեսանել ու գիտենալ, վերլուծել դաղափարի էությունը, ըմբռնել տեսադաշտը այդ իրականության դաղափարի։ Պատմաբանը պատասխանատու է վավերագրի, պատմվածքի և կամ զեկուցագրի հավաստիության, պարտավոր է անաղարտ պահել դրանք և գրի առնել հարազատորեն դեպքերի ընթացքը։

Պատմության նկարագրությունը փոփոխվում է ձևով յուրաքանչյուր սերնդի համար։ XX դարը չէ ընտրած նույն մեթոդոլոգիային, ինչ բնորոշ էր XIX դարում։ Իսկ իր հերթին այդ դարը չէր պահպանած նույն դաղափարախոսությունը ինչ կիրառկված էր XVIII դարի գիտնականների կողմից և այսպես դաղափարափոխությունները տեղի ունեցել են դարից դար։ Յուրաքանչյուր ժամանակաշրջան ուսումնասիրում է պատմությունն իր մտահոգությունների տեսանկյունով գլխավորաբար։ Պատմության բանձրացյալ նյութը, այսինքն գործողությունների հանաչողականությունը, փոփոխվում է ժամանակի ընթացքում, մարդու մոտ գոյություն ունեցած բնականաբար անհայտ տվյալների վկայության հետևանքով։

Արևելքում պատմաբանները նախ հանդես են գալիս որպես «ժամանակագրողներ»։ Հայ ժողովուրդը շատ շուտ զգաց, որ անհրաժեշտ է պատմությունը գրանցել շնորհիվ այն փաղանցքին, որ հաստատվեց Մեսրոպ Մաշտոցի գրերի գյուտից անմիջապես հետո։ Այդ պատմագրական գրականությունը կազմում է ինքնատիպ մի ամբողջական հայ քաղաքակրթության կորող։ Ոսկեդարն է, նախաձեռնողը՝ Մովսես Խորենացին։ Նույնիսկ այս V դարում, ենթակա քաղաքական բուժանումների, կազմվեց և հաստատակամորեն ամրացվեց նույն ազգին պատկանելու, նույն ցեղին, նույն կրոնին և նույն ավանդությանց պատկանելու դաղափարը։ Ոգեղենը բխում էր միատարր, քանի որ հայ ազգի արմատները արդեն ունեին համայնական մի խոր անցյալ։ Իր դժվարին աշխարհագրական տեղավորումով հայ պետականությունը բաժանված էր և պատկանում էր քաղաքական զանազան ոլորտների։ Գրի գյուտը, հավատքն ու գրավոր ավանդույթը փշրեցին արհեստական պարիսպները, որոնք պարտադրեցին մեզ պարսիկ կամ բյուզանդացի զավթիչը։ Ազգային ոգու հիմնադրությունն ու ամրապնդումը այս

V դարում մեզ միշտ արդարացի խոկումներ են պատճառում այսօր: Դրանք երաշխավորում են ժողովուրդի ինքնության հարատևումը: Հայ ինքնիրեն հանաչում է այսպիսի ժամանակաընթացքի տեղադրությամբ կամ տարածքին մեջ: Զևավորվելով նախ որպես ընտանիքներ, ապա ցեղախմբեր և վերջապես ազգեր, տարբեր ժողովուրդներ ունեցել են տարբեր հակատագրեր, բայց այնուամենայնիվ նրանք ունեն նաև ընդհանուր հակատագիր՝ ընդգրկվելով համաշխարհային պատմության մեջ:

Այսօր պատմագիտությունը վերածված է տիեզերային գիտության, վերածվել է մի օջախի և բարդական գիտությունների վերանսկիչի: Իրավագիտությունը, քաղաքագիտությունը և կամ փիլիսոփայությունը փոխառնում են պատմության տված լուսաբանությունները: Պատմությունը պիտի լինի միջազգային քաղաքականության ծոցում բանականությունների չափավորողը, կենսական ազդակ՝ ազգերի միջև անդորր և անխոով հարաբերությունների զարգացնողը: Պատմությունը նպաստում է այն սիրուն, որ տածում ենք մեր հայրենիքի հանդեպ, տանց արժեզրկելու ուրիշներինը: Այս համայնական փորձը միջազգային պատմության պիտի ծառայե իբրև օրինակ կամ իբրև չափանիշ, քանի նա մեզ կրկնակի ծառայություն է մատուցում՝ ներկայացնելով նույնաժամանակ միստիքն ու տրամաբանական վինակները անցյալի յուրաքանչյուր դեպքի մասին: Մեկուսացնելով իր իսկ ժամանակի հատուկ զաղավարները անցյալ դարերը ուսումնասիրելու փափագով, պատմությունը վերապրեցնում է այն հետաքրքրությունը, որ ընթերցողը կարող է զգալ ինչպես տեղի ունեցած դեպքերի երևման ժամանակ:

Պարոն Գյուլբենկյանը կանգ առավ հայ և ընդհանուր պատմության նաև մի շարք այլ հարցերի վրա: Վերջացնելով իր խոսքը նա ասաց.

Պարոն նախագահ, պարոնայք հարգամեծար պրոֆեսորներ Հայաստանի գիտությունների ակադեմիայի.

Թույլ տվեք արտահայտել մեր ամենաանկեղծ շնորհակալությունը ջերմ ընդունելության և այն բանի համար, որ դուք մեզ ընտրեցիք Ձեր բարձր և ազնվական կանոնի անդամ՝ Հայաստանի և Սփյուռքի գիտական ոգու արժանավոր ազգային հաստատության անդամ:

Վերադառնում ենք Պորտուգալիա հարստացնելու համար գիտական հետազոտությունները պատմության բնագավառում, որը միացնում է հայ և պորտուգալացի ժողովուրդները:

Շնորհակալություն ուշադրության համար:

Հանդիսավոր արարողությունից հետո պ. պ. Էդուարդ Գյուլբենկյանը և Զավեն Եկավյանը ակադեմիայի պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանի և ակադեմիայի մի շարք աշխատակիցների հետ այցելեցին ՀԳԱ ֆունդամենտալ գրադարան, եղան Գյուլբենկյան հաստատության անունը կրող ֆոնդում, որտեղ պահպանվում է երկար տարիների ընթացքում Գյուլբենկյան հաստատության կողմից գրադարանին նվիրատված թանկարժեք գիտական գրականություն:

Այցելուների կողմից տրված հարցերին պատասխանեց գրադարանի տնօրեն, ակադեմիայի թղթակից անդամ Վ. Նալբանդյանը:

Ն. ԴԵՐՈՅԱՆ